ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Նկատի ունենալով, որ հայցվոր կողմը նախապես վճարել է հայցադիմումի ներկայացման համար օրենքով սահմանված չափով պետական տուրքի գումարը, միջնորդել է անդրադառնալ կատարված բոլոր դատական ծախսերին, իսկ հայցը ենթակա է բավարարման՝ Դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքաշինության կոմիտեից հօգուտ Հայցվորների պետք է բռնագանձել 200.000 ՀՀ դրամ՝ որպես պետական տուրքի գումար:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 362-րդ, 234.12-րդ հոդվածներով՝ դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. «Վերածնունդ 7» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, «Արմեն-Շին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, «Արամե» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցն ընդդեմ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի՝ գնահատող հանձնաժողովի 24.02.2026 թվականի նիստի թիվ 6 արձանագրությամբ հայցվորների հայտը մերժելու մասին որոշումն անվավեր ճանաչելու, որպես հետևանք՝ գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու որոշումն անվավեր ճանաչելու, գնահատող հանձնաժողովին պարտավորեցնել համահայցվորների ներկայացրած հայտը բավարար գնահատելու և ընթացակարգի ընտրված (հաղթող) մասնակից ճանաչելու պահանջների մասին, բավարարել:

1.1. Անվավեր ճանաչել թիվ ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-25/28 ծածկագրով հրատապ բաց մրցույթ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.02.2026 թվականի նիստի թիվ 6 արձանագրությամբ «Արմեն-Շին», «Արամե» և «Վերածնունդ 7» ՍՊԸ Կոնսորցիումի հայտը մերժելու մասին որոշումը:

1.2. Որպես հետևանք՝

1.2.1. Անվավեր ճանաչել թիվ ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-25/28 ծածկագրով հրատապ բաց մրցույթ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.02.2026 թվականի նիստի թիվ 6 արձանագրությամբ ՀՀ ՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-25/28 ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումը:

1.2.2. Պարտավորեցնել թիվ ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-25/28 ծածկագրով հրատապ բաց մրցույթ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին բավարար գնահատել «Արմեն-Շին», «Արամե» և «Վերածնունդ 7» ՍՊԸ կոնսորցիումի կողմից ներկայացրած հայտը և վերջինիս ճանաչել թիվ ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-25/28 ծածկագրով բաց մրցույթ ընթացակարգի ընտրված (հաղթող) մասնակից:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեից հօգուտ «Վերածնունդ 7» ՍՊԸ-ի, «Արմեն-Շին» ՍՊԸ-ի, «Արամե» ՍՊԸ-ի բռնագանձել 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Դատական ծախսերի, այդ թվում՝ պետական տուրքի հարցը համարել լուծված:

4. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և հրապարակման պահից մեկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան:

ԴԱՏԱՎՈՐ **Ռ.Մ.ԲՈՒՆԻԱԹՅԱՆ**

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայք ում մուտքագրելով IEA7-AB14-44BF-806D հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը:

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am